ՀՏԴ : 396(=919.81)

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ. Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները), *Երևան, ՀԱԻ հրատ., 2022, 352 էջ +16 էջ գուն. ներդիր*:*

Բանալի բառեր՝ կրոնափոխ համշենահայեր, զվարճապատում, նույնասյուժե ստեղծագործություններ, փոփոխակներ, խեղապակաության թեմա:

Վերջերս ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, բանահավաք, բանագետ, ազգագրագետ և բարբառագետ Սերգեյ Վարդանյանն իր ծննդյան 70-ամյակը նշանավորեց հաճելի անակնկալով՝ լույս ընծայելով իր հերթական գիտական աշխատությունը՝ «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» գիրքը: Այն հաճելի և ինքնատիպ նվեր է նաև ժողովրդագետների, բարբառագետների, մշակութաբանների և ուսանողության համար:



Ս. Վարդանյանի սույն ուսումնասիրությունն իր առաջադրած խնդիրներով, այն է՝ կրոնափոխ համշենահայերի երգիծական մանրապատումներից մեկի համադրությունն այլ տարածաշրջանների նույնասյուժե ստեղծագործությունների հետ (այդ թվում նաև՝ օտարազգի ժողովուրդների) առաջին ու հաջողված փորձն է հայ բանագիտության ասպարեզում:

Երկար տարիներ զբաղվելով քրիստոնյա և կրոնափոխ համշենահայերի պատմության, ազգագրության ու բանահյուսության ուսումնասիրությամբ և անձամբ շփվելով ու գրառումներ կատարելով ճակատագրի և պատմական հանգամանքների բերումով հայրենի երկրից բաժանված, նաև կրոնով երկատված այդ հայությանը՝ հետազոտողն իրեն իրավունք է վերապահում շատ ու շատ հարցերի վերաբերյալ հիմնավոր և ուսանելի եզրահանգումներ անել: Դրանցից մեկն էլ այս աշխատանքն է, որով Վարդանյանը փորձում է մի քանի խնդիրներ լուծել՝

ա. ներկայացնել հայ և օտարազգի մասնագետների կողմից կրոնափոխ համշենահայերից բանահյուսական նմուշների գրառման պատմությունը:

բ. Նույնասյուժե երգիծական բանահյուսության տեսակներից մեկի՝ զվարճապատումի փոփոխակների համադրությամբ ցույց տալ դրանց ազգային՝ հայկական արմատները:

գ. Ինչպես առաջաբանում գրում է Ս. Վարդանյանը, այս հետազոտությունը ոչ միայն մահմեդական և քրիստոնյա հայերի բանահյուսությունը հա-

---

** Ներկայացվել է 04. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

մաղրելու առաջին փորձն է, այլև «Արդելէցիք՝ ավջի» (Արդալացիները՝ որսորդ) երգիծական մանրապատումի հետ սյուժետային ընդհանրություններ ունեցող ավելի քան երեքուկես տասնյակ տարբերակները մեկ ուսումնասիրության մեջ միատեղելու և համեմատելու առաջին աշխատանքը:

դ. Չնայած սույն ուսումնասիրության առաջ քաշած խնդիրների սահմանափակ հնարավորությանն ու ծավալին՝ այնուամենայնիվ, աշխատության հեղինակը գիրքը դարձրել է հանրագիտարանային բնույթի մի ինքնատիպ աշխատանք, որտեղ շատ բանագետներ, լեզվաբաններ, մշակութաբաններ ու այլ մասնագետներ և ուսանողներ կարող են հաղորդակցվել և յուրացնել ի մի բերված մի շարք նոր ու հետաքրքիր փաստեր և մասնագիտական հարուստ տեղեկություններ:

ե. Իր և այլոց կողմից գրառված պակասամտության թեմայով զվարճապատումներից մեկի երեսունյոթ տարբերակները, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի գրառողի կենսագրությանը, համշենահայության հետ ունեցած առնչություններին, գրառած նյութի լեզվական առանձնահատկություններին անդրադարձները հետազոտությանը կցելով՝ Ս. Վարդանյանն օգնել է բանագետներին, բարբառագետներին, մշակութաբաններին ու այլ մասնագետներին և ուսանողությանն անհրաժեշտության դեպքում հեշտությամբ օգտվել դրանցից:

զ. Հեղինակը սոկ նյութը ներկայացնող-փաստագրողի դերում չի հանդես գալիս: Նա շատ ու շատ հարցերում հակադրվում է հայ և օտարազգի գրառողների ու հետազոտող-հրատարակիչների բերած փաստերին ու տեսակետներին, առաջադրում իր մոտեցումները՝ դրանք հիմնավորելով համապատասխան փաստարկներով:

Ծանոթանալով հետազոտության հեղինակի օգտագործած հայերեն և այլալեզու մեծածավալ տպագիր ու անտիպ գրականությանը (հայերեն գրքեր և տարատեսակ ժողովածուներ՝ 271 միավոր, հայերեն պարբերականներ՝ 198 միավոր, հայկական արխիվային նյութեր՝ 11 միավոր, ռուսերեն, անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, սլովակերեն, հունարեն, թուրքերեն, աղրբեջաներեն զանազան գրքեր և պարբերականներ՝ 150 միավոր, ինչպես նաև որոշ խտասկավառակներ)՝ ընթերցողի համար նոր միայն պարզ է դառնում, թե որտեղի՞ց է գալիս վերլուծության ժամանակ փոքրածավալ թվացող թեմայի վերաբերյալ ներկայացված այդքան առատ տեղեկատվությունը:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աջակցությամբ 2011–2015 թթ. Ս. Վարդանյանի այցելությունները Թուրքիայի Արդվինի, Էրզրումի և Ռիզեի նահանգներ, Հեմշինի, Խոփայի, Զամլըհեմշինի գավառներ ու այնտեղի քաղաքներում, գյուղերում և յայլաներում հայկական դարավոր մշակութային արժեքները պահպանած կրոնափոխ համշենահայերից բանահյուսական և ազգագրական նյութերի գրառումները (դրանց զերակշիռ մասը Վարդանյանը տպագրել է իր իսկ հիմնադրած «Ձայն համշենական» ամսաթերթի համարներում, որոնք առաջիկայում պատրաստվում են հրատարակության) երիտասարդ մասնագետների համար ավագ գործընկերոջից օրինակ վերցնելու և հավաքչական ու հրատարակչական աշխատանքները նման միջավայրում համառությամբ և նվիրվածությամբ շարունակելու բացառիկ հնարավորություն է ընձեռում:

Ս. Վարդանյանի գրքում ներկայացված վերոնշյալ վայրերի բնապատկերներն ու համշենցի ասացողների տարատեսակ լուսանկարներն էլ ավելի են արժևորում այս յուրահատուկ աշխատանքի ինքնատիպությունը:

Ս. Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» աշխատությունն առաջադրած խնդիրներով և դրանց տրված համոզիչ պատասխաններով նոր խոսք է հայ բանագիտության ասպարեզում:

Շնորհավորենք մեր գործընկերոջն այս հետաքրքիր ուսումնասիրության լույսընծայման և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ՝ ցանկանալով առաջին հերթին առողջություն, որպեսզի այսուհետև ևս կարողանանք վայելել նրա պրպտուն մտքի ու արժեքավոր և ստեղծագործ գրչի պտուղները:

ԱՐՄԵՆ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության պատմության և տեսության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ բանահավաքչություն, գրականություն և բանահյուսության փոխառնչության հարցեր, երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ, մանկական զվարճախոսություններ, հայ ժողովրդական պատումներ: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 90 հոդվածի:
armensargg@gmail.com